# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**ՀՀ ԳՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի**

գ. Արծվանիստ **«15» «07» 2021թ.**
**ժ 12:00**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Դ. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ալավերդյան, Գ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

**ՀՀ ԳՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ**

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

**1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.**

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, և հայտերի բացման նիստին ներկա լիազորված ներկայացուցիչները լիազորված չէին գների նվազեցման շուրջ բանակցություններ վաելու իրավասությամբ, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի հուլիսի 12-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 15.07.2021թ.-ին ժամը 12-00-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակիցներից ոչ ոք չէր ներկայացել, ուստի 1-ին և 2-րդ չափաբաժիններով մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկները մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնով՝ «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- 2-րդ չափաբաժնով՝ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.**

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ չսահմանելով:

Ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթաց՝ սույն հայտարարությունը հրապարակելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.**

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ, 1-ին փողոց 160 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ __________ Դ. Մանուկյան

Անդամներ՝ __________ Ա. Ալավերդյան

__________ Գ. Գալստյան

Քարտուղար՝ __________ Ժ. Խաչատրյան